

Hentchak :
ORGANE DU PARTI
REV. ARMÉNIEN
HENTCHAKISTE

ՀԵՂՈՎԱՐ

ADRESSE
M. BELLART,
5, Peckham Rye,
LONDON, S.E.
Angleterre.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵՐԻ ՀԱՐԳԵ

ԳՐԱԴԱՎՈՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԴՐԱՄ

Քրաղաքական նշանաւոր անձնաւորութիւններ, պաշտպաններ թիւրքահայ գաաի Գրանսիայում, Ընդիայում և Խալիայում, անշուշան մի բաւարարութիւնը ու սպացան իրանց կառավարութիւնների կողմից այդ գաաի մասին ալբուծք հարցերի առիթով։ Գրանսիական և անդիական պարլամենտներում պերճարան ճանախունները չը խնայեցին ոչ մի թանձը գոյն, ոչ մի յուղեջ շեշտ, ո՛չ մի խելահաս խօսք՝ ներկայացնելու համար Եւրոպայի ազքին հայկական նոր սարսափները։ Սասունում։ Խանց կառավարութիւններին նրանք արին հարցեր, որոնք արժանի էին այլ կերպի գոհացման, քան այն ինչ, որ ուղեցին տալ նրանց Խանց կառավարութիւնների անդործութեան դէմ ուղղւած նրանց կորումարան բօղոքներին, բողոքներ յանուն մէկ ամբողջ ժողովովի զլուին թափուղ կրակու բայի սիստէմական քաղաքականութեան դէմ, նրանք ստացան պատասխան զիսլօմատական Ճապուկ եռուերի մի շաղք, որուց ներքին միաբն էր, որ Սասունցիներն ապատակը են նկատում սութանի կառավարութեան կողմից և հետեւարար . . . հետեւարար Ճնշել ամեն ըմբռատութիւն պարտականութիւնն է իւրաքանչեւը կառավարութեան, և ուրիմ, նաև առաջկական Ճնշել ։ Մէկ ամբողջ գաատոի բնակիչներին ենթարկել կողովուաի անգատութեան ու կատորածի զիսլօմատական լեզուն անւանում Ճնշել ըմբռատութիւնը։ Եւ նոյն ցիսիզմով են բարձական զիսլօմատական յայտարարութ է, որ

իրեւ սխաղաղութիւնը՝ պահպանելու զործ...
Անտարսակոյս, այսաեղ մեր առաջ բացւած է
մէկ այնպիսի բառարան, որի բառերը քեեռա-
գրերի խորհրդաւորութիւնն ունեն, որ անցնելով
խելօք Վէլկասէների բերանի մազով, ընդունում են
այնպիսի նշանակութիւններ, որոնք հասարակ մահ-
կանացուներին համար անընթեռնելի և անհաս-
կանալի են: Որ երկու կազմակերպւած տէրու-
թեան իրանց ազգերին իրալու վրայ յարձակե-
ցնելը և իրարու արիւնը փօթելը զիպօմաներն
ընդունում են իրրեւ առաքինութիւն և պաշ-
տօնապէս ճանաչում իրրեւ ո՛չ մարդասպանու-
թիւն, այլ սպասերազմ «— զա հասկանալի է,
աւտզ, քանի որ սքաղաքակիրթ» ազգերն այդ
վայրենի սպանկափայից գեռ չեն ազատւած և
քանի որ ենթադրւում է, թէ իրար ընդհար-
ւող մարմինները ներկայանում են առաւել կամ-
նազ հաւասար կազմակերպւած զօրութիւն, և
այդպիսով խախաւած խաղաղութիւնը, որքան ցա-
ւալի նկատեէ, արդու հանդերձ համարւում է ո՞ւ-
րինական: Բայց անհասկանալի է, որ սքաղա-
քակիրթ սպասութիւնները շատ բնական են զբա-
նում մէկ ամրող տէրութեան կազմակերպւած
կոտորածը՝ գործադրւած մի փոքր, անպաշտպան
և անզէն ժօղովրդի վրայ: Եցտեղ սխաղաղու-
թիւնը խալ խալ զը « հէնց այդ թշւառ ժո-
զովուրզն է նկատեում և ո՛չ սըմբռառութիւնը
զազող « սպասութիւնն իր մահափեռ մահա-
կավ: Երբարեւ, զիպօմաների շրթներում ա-
մենաբնական ողջամասութիւնն էլ կորցնում է իր
սովորական տրամադրանական սպարզութիւնը և
փոխում ու գանցնում մոդական կախարդութիւն-
ների մի հիւնալը, աչքակապութեան մի
առեւնու:

Մինչդեռ այդ զիսլօմատական լիզուն, երբ
այն փետառմ ես իր զարդարուն ու գոյնզգոյն
փետառներից, ուրիշ ոչինչ չէ նշանակում, եթէ
ոչ ուժեղի ընթառունքի պրագործութիւն տկարեն
վայ, եթէ ոչ կառավարութիւնների ոիրաւունքն
իրանց զօրքելի միջոցով խեցիկ ժողովադաշին մաս-
սաներն եւ սրա ինքնազիտակցութեան ամեն-մի ե-

բեկթը, եթէ ոչ՝ ստրուկ ժողովրդի գատապարա-
վիլը ջնջման ու կորսածեան, քանի որ իր թըշ-
նամին միշտ աւելի զօրաւոր է յարանւելու:

Եւ այդպիսի բունակալական քմահաճոյքը,
այդպիսի ոճրագործական քաղաքականութիւնը
մինչև պետական մի սկզբունքի աստիճանի վրայ
բարձրացնելուց յետոյ ՝ “Պիսլոմատ” Դէքպասէների
բերանում հնչում է մի քստմնելի ծաղրի շեշ-
տով նրանց այն խօսքը թէ՝ “Թիւրքական վար-
չութեան տակ ժողովրդի ապատակական իրա-
ւունքը” սուրբ է . . .”

Քաղաքակիրթ ոշխարհն անշուշտ պէտք
չըւնէր Գէլկասէի այդպիսի յայտարարութեան՝ մր-
տածելու և ընդունելու համար միենոյն բանից:
Ժողովրդի այդ իրաւունքը սրբագրօծւած է պատ-
մութեամբ և հայ յեղափոխականներն էլ վա-
զուց արդէն, առանց Գէլկասէի թոյլուութեան,
ջանք են անում գործադրել այդ սուրբ իրա-
ւունքը: Բայց հայկական գաաի ֆրանսացի պաշտ-
ոպանները — սօցիալիստ սրագամուորներ ֆրան-
սիական պարլամենտի — իրանց հարցը զնելով
Գէլկասէնն, միտք չունեին լնաւ նրանից իմանա-
լու, թէ սուլթանն իրաւունք ունի՞ հայերնն,
իբրև ոքմբոստների կոռորելու, թէ ոչ, և կամ
հայերն իրաւունք ունեն ապատակութեամբ թօ-
թափելու բռնակալ լուծը, թէ ո՞չ: «Արանց նը-
պատակն էր իմանալ, թէ եւրօպական պետու-
թիւնները և, այդ պարագային, մասնաւորագէս
ֆրանսիան, մաաշիք են արդեօք, այ ո՞ թէ ո՞չ,
վերջապէս ճանաչելու իրանց ստանձնած սպար-
տաւորութիւնը» և գործադրելու իրանց «խոս-
տումները» թիւլքահայ ժողովրդի նկատմամբ,
քանի որ այդ ժողովաւրդը ենթակայ է պարբե-
րական ջարգերի: Գէլկասէի պատուխանն այդ
հարցին, գէմ ներկայ րօպէի համար», որբան
էլ երկիրիմի էր, այնուամենաշիւիւ բացասական ե-
ղաւ:

Եւ ասկային հայ յեղափոխականները չը
պէտք է մոռաննան, որ նորին իսկ եւրօպական զիսլ-
լումատիան այսօր Հրապարակապէս ձանաչել է հայ
ժողովրդի նկատմամբ ո ապստամբութեան իրա-
ւունքի սրբութիւնը^{ա:} Թռող նրանք շանդիտա-
նան, որ նորին իսկ եւրօպական զիսլօմա-
տիայի աչքին այդ իրաւունքի գործ գրու-
թեամբ է, որ նրանք յայտարարած կը լի-
նեն հայ ժողովրդի գոյութեան և ազատազրու-
թեան իրաւունքը[։] Թռող նրանք եղբակացնեն
նաև, որ եւրօպական զիսլօմատիան միայն այն
ժամանակ ո յարմար ըօպէ[։] կը համարէ միջամ-
տելու ու լուծելու թիւքահայ ննդիրը, երբ այդ

բօպէն կը տաեղծւէ Հայ ժողովզի սուրբ իրաւունքի, ապատամբութեան իրաւունքի գործադրութեամբ : Այդակաղ մենք տեսնում ենք մի յաղթանակ հայ յ յեղափոխ ի տեղ գաղափարի, որով նա այսօր քաղաքացի անժխտակի ու պատմական իրաւունք է ստացել այն մեծ պետականութեաների կողմից ևս, որոնք, վերջին հաշով, կոչւած են լուծելու թիւրքահայ խնդիրը: Եւ ահա ինչո՞ւ, բայց թիւրքահայ գատի և Թիւրքա-Հայաստանի ներկայ ներքեն զբութիւնների պայմանից, նաև հայ յեղափոխականների համար պայման է զիսաւոր ու հիմնական տակարիկա ունենալ հետեւալը, — ընդհանուր ապատամբութեան պատրաստութիւններ Թիւրքա-Հայաստանում, որով նախագըծով, կանօնաւոր զինուորագրեւած զօրութեամբ, որն առաջ կը գայ միայն կանօնաւոր կազմակերպութեան և գործունեցութեան որոշ ձեի գորութեան միջացնեալ:

Հրատիվելով՝ յեղափոխականներին այդ տակ-
տիկան գործադրելու թմբոքաց—Հայաստանում՝
դրանով իսկ մենք հակառակ ենք յայնուում
ներկայում ամեն մասնակի շարժումներին, որոնք
ունա՞շ ունեն իրանց անպայման կրթիչ ու պատ-
սասառական յեղափոխական նշանակութիւնը,
այս որոնք ներկայում այլ ևս յայնուում են
կատարած և աւարտած իրանց պատմական ան-
հրաժեշտ գերը։ Ասկայն նախազգուշացնում ենք
հենց այժմից ամեն տեսակ թիւր եզրակացու-
թիւնները, որ ամեն բան շփոթող մաքերը թե-
սւ կարգան մեր տողերի մէջ։ Մենք ողոր-
մերի սովորութիւնը չունենք գրել առ զերի
ու չ, քանի որ ամեն հրապարակազրի — և
անսահնդ յեղափոխական հրապարակազրի —
պարտականութիւնը և իրաւունքն ենք համարում
գոտուել միշտ բացարձակ և աղմաքար խօսելու
քանչելի սպարգեցից։ Մենք ասում ենք, այս,
զէտք է հետեւ լնդհանուր ապատամութիւն
պարբասելու առկաթիկային՝ սրա բոլոր ուշանջ-
երով, և խօսափել մասնակի շարժումներից։
Այց եթէ վայրագ թշնամու բանակալ ընթաց-
ըն է այս կամ այն հանգամանքում՝ սահզծում
հայ ժողովրդի մէջ խթառութիւն։ եթէ այս կամ
ոյն գաւառը թշնամու կողմից զբւում է անե-
անելի վիճակի մէջ, երբ կատաղի հալածանքն
ու ջարդն է սպանում ժողովրդին։ եթէ թըշ-
ամու յարձակութիւնը ժողովրդին գնում էն
նըննապաշտապանութեան սուրբ պարտականութեան
և իրաւունքի գործադրութեան պարմանում, —
ոյդ ժամանակ, ինչ որ եւ լինեն իրանդ ներքին

հանգամանքները, յիշափոխականները, յիշափոխականները, խմբերը, պարտաւոր են լինել ու հանդիսանալ յեղափոխականն և կազմել իրանցից այն առաջաւոր գունդը, որ ենում է թշնամու հարւածներին պատասխանելու հարւածներով, պաշտպանելով հալածւած գաւառի կամ գաւառների ժաղավորի դոյութեան ու կեանքի իրաւունքը: Սմէնից առաջ յեղափոխականը պէտք է լինի յեղափոխական: “Աս զաղարում է լինել արդպիսին, եթէ առաջ չէ խաղում թշնամու դէմ, երբ սա իր մահափեռ հարւածներն է զլորում անպաշտպան ու տանձւած ժողովրդի դիսին”

ՄԱՐՏՈՒՄ

(ՍԵՍՆՈՅ ԴԵՊՔԵՐԻ ԸՆԹԹՈԱԾ)

I

ԽԱԻԱՐ

Աենդանի է մահը մեղ հսկում է նա խիստ՝ Պաղ, խոժոռ ու ագահ, անկշտում, անհանդիստ: Լայն երկինքն է մըմին՝ սաս թէ մէկ ահից: Խուար ոյժն է ծագում չէութեան խոր վեհից: 2ը կայ լոյս, ըս կայ ստւեր. երկիրն է ամբողջ մուժ, Խնչէս սև գերեզման ամայի ու տղմաւ: Խուարում էլ ոչինչ բընաւ չէ նշմորում: Իր ամեն մի քայլին զում է մարդ սարսափած 1. թափւած դիակներ, որոնք չեն համարում, Որո՞ց մօտ բորեանն է արդէն կուշտ՝ մըրափած, Որո՞ց վսայ յագեց: ծ ագուաւն նիստ չէ տոնում, Որո՞ց դէմ շնագայլը յակնած: Էլ չէ ոռնում:

Որքան ցաւ, որքան մահ՝ բուրդերով բարձրացած, Աիմեարի մէկ արձան՝ զէպ երկինք ամբարձած:

Ամեն բան այդտեղ է, ահաւոր պատմութիւն՝ գաղտնաբար սըրուծ որով կտորուած բազմութիւն, Որ այդպէս յոզմւելով յաշթանակ է տաբած, Իր օրտից էլ ողին ստրկութեան վըտարած: Մեծ մահեր, որոնցից մէկն արժէ հազար կեանք, Որ անդուն ձնշում է շղթայի պինդ կապանք: Մարդկութիւնը աղատ է մարդու իրաւունք Եւ ով այդ զգացել է, մեծ է նրա պաշտամունք: Օ ինչպէս, որ ինձ միշտ ըստիպեն մէջք ծըսել, Միաբ, հսդիր ու սիրով գարշ տիպանք մէջ իրաւունք, Որ ինձնից խըլեն այն, ինչ մասն է գոյութեան:

Իրաւունքս ու խօսքս պատիւն իմ էութեանս. Որ ասեն արարած ինձ ըստոր ու ատած, Ըստուկ ու անպիտան, երբ եմ ես կիսաստուծ. Որ ես զեռ կենդանի՝ պատրաստեն ինձ դամբան Եւ ասեն ինձ ոչինչ, երբ եմ ես ամեն բան: Օ այնժամ, սուսերն է իմ փառքը, իմ պաշտպան, Աը խըլեմ հուլն երկնից, ամպրոպը՝ պահապան, Ցեղափոխութիւնն ինձ իրաւունք, ամբիօն— Եւ մէկիս տեղ այնժամ կը լինի լէպիօն:

II

ՀՈՒՏՍ ԱՐԵՔ

Խառնազնջ ամբոխըն այն գազան ցեղերի, Ինքն իրան համոզեց, որ ամեն տեղերի Կայը ու տուն, իրաւունք, և՛ պատիւ և թէ կետնը իրան է սեփական, իր որսն ու խըրախճանք: Եւ մակուքն գերիշխան, հարեմի մեղկ գերին, Վիժւածքըն այն թամար բարբարոս գնդերին, Բազմած իր արնագին գահի վրայ երերուն, Սիրտը՝ փուչ, խօսքը՝ թոյն, բերանը՝ փրփրուն, Կետում է հրամանը՝ ու Շուտ արէք...” Օ սարսափ... Կըրակ, որ վիժում է իր ներսից նենդ վիշապ, Պատառաւած երկնից յորդ տարափ հայ արեան — Մի խօսք, որ փսխեց պղոնկորդի այն տիրան:

III

ԿՐԻԿ

Արիւնը հասում էր: Փոթորիկը կռւի Ար թունդ աղաղակը յաղթութեան ու ցաւի՝ Խառնած մի մրկութուփի յորձանքում օդային՝ Բօմբիւնով թնդական, ահով գըժուսային Գըլորում էր չորս կողմ: Առուն կախւած էր օդում, Թնդանօժն իր արած կատորածն էր բօմում, Ժայռաերին զարկում էր արձագանքն իր որոտ, Մերթ լեռան գագամը, մերթ նրա խոր ըստորոտ Խնտու ու ժգին պայմում էր և յանկարծ տապ առնում: Արծիւն ու անգղն էին բարձունքում սաւառնում, Հակելով իրանց զոյն սըրատես հայեացքով: Մահեն էր, որ արշաւում էր անզուսպ ընթացքով, Մանդաղով կըտրելով բոլորն իր Ճամբային, Դիզելով կոյտերով զիսկներ մարդկային: Այն վարի գաղանը՝ անունով մոլի քուրդ, Տըմարդի թիւրք զինոր, որ չունի բնաւ յագուրդ, Միտուղ գահակից, իրեւ հողմ ու ժանտախտ Հայի վոյ զարւեցան, սըրիելով չորս կողմ ախտ: Ահ, ինչ մեջ արիւնն էր, որ ուզում էին նրանք, Այդ մարդկանց զիսկներ, ոսկերքի լի փշոանք, Ամօթը խառնած մոլութեան հետ վայրագ, Թոթարի պղծոթեան ծորաւը խայտառակ, Այդ փառքը զոյն վագրի իր զոհի խեղձ զլսին, Իրաւունքն գաղանի, որ մոթում անմեղին:

Ինչ. այդ էր, որ նըրանց բռնապետն կատաղի դրսում է իր վասրից վրան հայի գագաղի, շնորհաւոր քոջութիւն վասն ըստրուկ Տանտաղի, Մոլեգին ցնծութիւն ախտամոլ մի խաղի: Ինչ. վատին մեր կի թրն, մանուկներն եին պէտք, Նրանց մարմին, նրանց պատիւ, նրանց տանջանք ու տղէտք, Մեր ինչք, գի զ ու շէներ, որ լավամ էր հրդեհ, Բիւրուտոր գիտիներ՝ ճակատով բաց ու վեհ... Լաւ. նո այդ ունեցաւ, և զրա հետ միատեղ — Մեր աղատ կրծքերի կոչն աղատ ու աշեղ, Ապստամք սրտերի բաբախումըն արի, Փողըն աղատութեան և, կըսիւ քաջարի, Մահն իրանց ճակատին, բայց կեանքը՝ սուրբ գործում, Որ զուր է տիրանը ջախջախել միշտ փորձում: Տառապանք, մերկութիւն, կոտորած, ցուրտ ու սով, Անարգանք, արտասուր, ողք, կորուստ — օր լուսով Արեի տակ տարին, գիշերները կրեցին Նրանք, որ խեղճ ոչխարի անունով ծնեցան, Բայց որ վերջը դարձան առիծներ մայր հաղի, Անվեհեր՝ մարտիներ լիդգէմ բիրտ այն գողի: Ոչ, ոչ, այդ ժողովուրդն մահին չէ պարտական, Թէ նա է սպարտացի իր վարըով մարտական, Թէ լէօնիդասեան ունի սուրբ յաղթառակ, Մեռնելով արեան մէջ մեռնելով հորի տակ, Կուելով մինչև վերջ՝ կին, ծեր փորբ, տըղտմարդ, Իրաւունքն փրկելու՝ ելնելով ահեղ մարտ, Գրկելով զրօշակը յանուն ողատութեան, Երկիրն արած խորան սուրբ նահատակութեան:

IV

Յ Ր Ե Շ Ն Ե Ր

Եհ, էլ ինչ վոյելել չը կայ ձեղ խանդարով, գողերին աշխարհից էլ չը կայ վըտրող. Արեան խոր տիզմի մէջ թէ խեղուէր, գարշ օձեր, Դափիներ ձեղ տը ին քաջութեան ձեր փարձեր: Կայցեր նըրանց վոյ և մնացէր այն տիզմում. Հենց այդ է ձեր տեղը, նա ձեզ գեռ չէ սեղմաւմ եր հեղուկ պատանքում, այլ առլիս ահարկու Ձեղ մի տեսք և աղտոտ ծիրանի վերարկու: Ձեր նախնիք, որ էին քիչ այլ կերպ մեծափառ, Ձեղ կըտակ են արել մարդասպան լոկ տապար, Նըրանք ձեղ թողել են իրանց գարշ յատկութիւն, Առանց այն հըրաշքի, որ էր նրանց մեծութիւն, Առանց այն դըժախիքի, գիւական վեհութեան, Որ նըրանց արաւ մեծ հրէշներ պատմութեան: Իբէդուլլահ, Լանգիթամուր, ապա Զալլուէդին, Եւ նըրանց յաջորդող սմբողչ շարքը մթին Հենց իրանց անհամար ոճիրից ջարդեցան Եւ հենց այն տիզմի մէջ յափտեան խեղուեցան: Պատմութիւնն նրանց առ նո զուրս թըքեց նողկանքով, Այդ թուբը ժողուցիք գուր ձեր նոր յանցանքով: Թո՞ղ այգակն հենց լինի, մեր արեամք գեռ անյագ՝

Խըմեցէր այն գարձեւուլ, մեղ մեռնել նահատակ Յաղթանեկ տանել է, և նրանից աղատ կեանք Ար վայլէ մեր գլխին, տալով բաղդ ու բերկունք Խըմեցէր. մեր արիւնն թէ տիզմ է ճահճարեւ, Կա հեղեղ է նոյնպէս. ձեր տապարն գահճայիս Պիտ մընայ օդում կախ:

Կա կընկնէ ձեր գլխին, Կատաղած կը խեղզէր զուք մէջն այն հեղեղին:

V

Ս Ր Բ Ա Վ Ա Յ Ր

Օ տըխուր սրբավայր, օ երկիր ընտանի, Ուր մարդիկն են գերի. բընութիւն գեղանի, Օ զեփիւր մեղմասահ, կարկաչներ՝ գետակի, Հովիտներ լըռակեաց, գեղաձայն թոշնակի Երգեր բաղցը ու տրտում, որ հնչում էր մեղմիկ. Դաշտային ծաղիկներ՝ և շուշան, և յասմիկ. Օ լեռներ ծերոնի, գարերի նահապետ, Արծաթեայ լճակներ, արիքներ վէտ ու վէտ. Օ երկիր, օ լուսին, օ արև ու աստղեր, Աիրասուն օդ ու ջուր, տանջանքի սուրբ տեղեր, — Գուր այդտեղ, ուր բիւրեր կեանքից են զգլուել, Ինչո՞ւ էր կարմըրել, վարդագոյն ներկըւել... Հարսանեաց կարմիր է, թէ մի սո՞րբ էր խորան, Ուր տըւեց ողջակէզն տաբավներ յորդ արեան... Անինչ

Յ Ն Յ Ա Վ Ա Կ Յ Ց Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Թ Ի Ւ Ր Ֆ Ի Ա Յ Ի Ց

Ա յ ն Ա պ ր ի լ 14/27, 1904

Եիւթական և մանաւանդ բարյական տեսակէն ներով շատ տիսուր վիճակ մը կը պարզէ Ապարաւականի հայ ժողովարդիք. Ատոր պատճառները բազմագիմի են, զոյս պարզաբանել շատ երկար կը լինէր:

Ապարաւակէնը շատ ճարպիկ քաղաքականութիւն մը ունի, շնորհիւ մանաւանդ կուսակալ թաւ հիր փաշայի խելացի վարմունքն, որուն պատճառով յանազանէրիկ անուն մը հանած է մեր միամիտ ժազովդեան քով, մինչդեռ իրականութիւնը այն է, թէ թաշիր փաշան իր կառավարութեան ամենէն հաւատարիմ ու շահախնդիր մէկ պաշտօնեան. Է շատ ճարտար զիւանագիտութիւնով մը: Աւ վերջապէս իսկական թուրբ մըն է նա՝ իր ողդային նենգամտութիւնով լեցուն... Ժողովրդին այս նեղ, աղքատ, անօթի վիճակին մէջ, մեր վալին, իր խելքով յաջաղեցաւ հաւաքել անվածը մատցած ահազին տուրբեր՝

ծախելով գիւղացիի միակ տպաւէն դուրսին իսկ. բաշաբացիի տուներէն իրենց գործածական անհրաժեշտ անկողինը, կարատին քաշել տեսներով, անպտուղներէն ի զատ պաղատաւ ծառերն իսկ կտրելով, մարդոց վըրայէն իրենց վերարկուն, շալվարը հանել ծախելով. Ասոնք ցարդ չը տեսնուած խտութիւններ են, զորս ոչ մեկ սպառած անուանուած կուսակալ չէ գործադրած...: Աչա մեր ոլաւ վարդին... վայ մեր ժողովը գիւղին, որ այսքան մարդ կրնայ գնահատել: Այս վոլին իր ճարպիկ, քնացնող ընթացքով յաջողեցաւ վանի հայերու մեջ մեղացնել յեղափոխական գաղափարը և զանոնք նիսելացին, զգուշաւոր վիճակի մը մեջ գնել... Հիմա անուղղակի լրտեսական բանակ մը ունի նաև վաճառականէն սկսեալ մինչև հայ արհետաւոր գաստարգին մեջ... Եթէ դեռ չանդրագառ նայ վանեցին իր այս վիճակին՝ շուտով իր կորստեան վիճը պիտի գլորի անդարձ...: Անցեալ փառքը ներկային կամ ապագային վրայ ճերմակ քօղ չը կրնար գաղափարի անոր անախորժ հետեւնքները կրել տալով շատերուն...:

Ո՞եր սպառած վալին այդ ճարպիկութեամբն է, որ սպառած համարուած յեղափոխականներու ամեն գաղտնիքին օրը օրին կը տեղեկանայ... ըստ որում այդ կերպով էր որ անցեալ տարի Վարդգէսը ձերբակալից՝ անոր անախորժ հետեւնքները կրել տալով շատերուն...:

Անայ կուսակալին անմիջական յաջորդներն են երկու պայշտօնեաներ: Մէկը փոլիս քօմիսէր Հիւնի էֆէնտին է: Այս անձը բնիկ Կարսի գիւղերէն գաղթական մըն է. նաև Կարնոյ շրջականները տւազակութիւններ ըրած է: Ի գերջոյ ններման արժանանալով (թիրք կառավարութիւնը միշտ դողմադապաններու ներելու մասնաւոր ծրագիր մը ունի) Վան կուգայ՝ ցնցոտիներով ու անօթի: Առեն մը գաղտնի գողութիւն և մուրացկանութիւն ընելով կապրի եղեր, ու յետոյ ոստիկան կը գրուի — սրիկայութեան ասպարէզ...: Հիմա խաղաղութեան այդ պաշտօնեան կուսակալի աջ բազուկն ու խորհրդականն է, միամիտ դասակարգի մը հաւատացնելով թէ ինը ուղղամիտ և ոչ կաշուռակեր մէկն է... մինչդեռ չափազանց կոշշառք կուտէ՝ իր մասնաւոր մարդկանց միջացով. Նըմանապէս կարգ մը հայերու հետ ամեն տեսակ անբարոյականութիւն կը գործէ՝ իր ձեռքին տակ պահելով իրենց մը հայ կիներ...:

Կուսակալի յաջորդներուն մեջ նշանաւոր է իր քեռորդի Էտհէմ պէյը: Սա բոլորովին անուս և գիր կարգմունք գուրկ մէկն է: Նաև՝ իրեւ յիմնապետ կուսակալի թիկնապահն էր: Անցեալ տարի, Վարդգէսի բոնուելուն առմիւ, թապոււ աղասի (հաղարապեա) եղաւ: Աս ալ գինով ու Հիւնիի պէս անբարոյական մըն է... շնորհեւ աղէկ վալիին...: Ասոնք բարոյական մըն է... շնորհեւ աղէկ վալիին...: Ասոնք ու իրեւ յետեւորդ պաշտօնեաններ քաղաքը աւելեցին քանդեցին... Ասոնք սուս յեղափոխականներ ու դործեր ստեղծելու մեջ ճարպիկ են պաշտօնի բարձրա-

ցում ու աստիճան ստանալու յոյսով. և իրաւունք աւունին...: Անցեալ ամսուն կառավարութիւնը պահեստ զօրքերը ժողվել սկսեց. ատոր վօայ թուրք ժողովորդին մէջ յուղումներ տեղի ունեցան: Ասոնք խորհուրդ ըրին որ պէտք է նախ հայերը կոտորել և ապա իբր զինւոր հեռանալ վանէն: Հայ ժողովուրդը այդ պատճառով բաւական վախի մէջ ինկաւ սակայն վալին իր օգնական Օհաննէս էֆ. առաջնորդին հետ եկեղեցիները զրկեց ժողովուրդը համոզելով թէ բան մը չ'կայ և Սուլթանին համուր աղօթք ընել տալով:

Ենօթութեան ու դրամի նեղութեան պատճառով այս ձմրան քանի մը անգամ զօրքեր փիւսնի իրենց զէնքերով: Ասոնք կամ արտասահման կանցնին, կամ գաղտնի աւազակութիւններ կը նեն:

Եւճաւազի մէջ համիսիկ աւազուկապետ քէոռ Հիւսէն փաշան երկար տարիներէ ի վեր տեղոյնին հայ յերը կողոպտելէ, սպանելէ և Մելիքներու դարաւոր ընտանիքները քանդելէ, ոչնչացնելէ ետքը, այս անգամ քանի մը հայ գիւղեր բոլորովին հայերէ գաղտնարկութիւններէ գրաւեց, ուր քիւրտեր տեղափոխութեան շիներ շիներուն, վերջերս տեղւոյն գաւառին գայակամ ընտրութեաւ, իր չարութիւնները անշոշտ պաշտօնապէս ալ նուիրագործելու համար:

Ամսիս 4-5-ի լուսնալու նոր կիրակիի գիշերը կառավարութիւնը քանի մը հարիւր զօրքով, փոլիսներով, ոստիկաններով, իր հետ ունենալով սանդուխ, թիթեղեայ մեծ ամաններով նաւթե և այլն, թազա քարեկի թաղ խուզարկութեան գնաց, սակայն բան մը ըստ գտնելով ետ գարձաւ: Այդ ալ գաղտնի ձեւ մըն է եղեր...:

Անցեալ շաբթօւան մէջ, Վանի թուրք ամենթաղերը 2-3 օրինակ յայտարարութիւններ ձգուեցան, թուրքերէն լեզով գրուած ու փոլիկանայ 150 երկար տղերէ, ու կառավարութեան կործանարար ընթացքը և զեղծումները մտանանիշ ընելով՝ կոչում կը ներ իսլամ տարբին իր ձայնը բարձրացնել ու իրենց զուրանի և շարեաթի համաձայն ընթանալով՝ ոչ ուքի զրկանք ու անիրաւութիւն ընել, ու արդարութիւն միայն ի գործ զնել...: Կառավարութիւնը նախ կասկածեցաւ թէ հայ յեղափոխականներու գործ է այս, սակայն վերջը համոզեցաւ թէ հեղինակները թուրք յեղափոխականներն են:

Պահոց Աւագ շաբթօւն Խիստ խուզարկութիւններ կատարուեցան Խօշոպ գաւառի կասր և Զէյնիս գիւղերուն մէջ: Պատճառը այն է որ գաղտնի հետագիր մը եկած էր, որուն համեմատ իրը թէ խուսր մը յեղափոխականներ Սալմաստի մէջ պատրաստուած են վան անցնելու համար:

Երկու տարի առաջ փօստատան հայ պաշտօնեայ սրիկայ մը, Ճոչալա (Սարտիրոս) անունով, կարգ

մը նամակներ բռնելով՝ անոնց պարունակութիւնը վկասակար մտքելով թարգմանեց ու կառավարութեան յանձնեց։ Վերջերս ատոնց ինդերը քննուեցաւ, տէրերը ոմանք բացակայ, ոմանք պատրաստ և ոմանք ալ փախտական։ Մէկը վճիռ կերաւ, որոն մեր վալին ժողովրդի աչքին փոշի փշելու համար, անմիջապէս ներում բերել տուաւ, մինչ անդին քսանէ աւելի երիտասարդներ յեղափոխական անուան տակ տարիներէ ի վեր կը հեծեն բանտին խորը . . .

Կիւթապէս ըո՛լորովին քայբայուած, բարոյապէս ինկած, անգլուխ, անհովիւ, լքուած, յուսահատ — ահա Վասպուրականի ժողովրդեան և մասնաւրապէս հայոց վիճակը . . . Ասոր վերջը ուր պիտի յանդի։

ՀԱՄԻ

ՄԵՐՍԻՆ, Մայիս 21, 1904

Հայրենիքի մէջ սրտաձմիկ դէպքեր օրըստօք կը շատնան։ Հայ շինականը իր սիրուն ձագուկները կորսնցուցած, կսպասէր օր մը նորէն գրկախառն համբուրուելու յուսով։ Բայց, աւաղ, որ այն քաջերը անդամ մը ինկած էին թիւրքին ճիւաղային ճանկերուն մէջ և ազատւիլը այլ ևս անկարելի դարձած։

Արինարըու գաղան կառավարութիւնը վերջերն 2 հատ կտրիճներու ալ արիւնը խմեց։ Մայիս 10ին, բանտին մէջ, Հաճնցի բարսեղը և կարապետը իրենց առանձնասենեակներու (իրուսի) մէջ գիշեր տեսն խեղդեր են։ Այս լուրը երբ առաւօտուն լառեցաւ, իսկոյն այնտեղ հասայ և տեսայ երկու խեղդամահ եղածները գետնի վրայ փոռուած։ Քեչ վերջը նուս։ Տիւպատոսը իմանալով եղելութիւնը՝ պաշտօնեայ մը դրկած էր բըն-նութիւն կատարելու, բայց ի զո՞ր, քանի որ լնողը կառավարութիւնն էր։ Ա՛ն, ինչպէս կարելի է նկարագրել այն ապաւորութիւնը, որ այդ սրտամոլմօք և կոկծեցուցիչ լուրը թողուց ամբողջ Մերսինի ժողովրդի վրայ։ Հայը կողբար իր քաջ երիտասարդներու կորուստը և սոսկումով կսպասէր թէ, մի գուցէ 95—96-ի ջարդերը նորէն վերսկսեն, որովհետեւ բոլոր թիւրքերը բացարձակ կը յայտարէին թէ ամբողջ կեալուները այսպէս պէտք է ընել։

Բարսեղը և կարապետը որպէս մարդասպաններ 1899-ին բանտարկուած էին։ Բարսեղը արհեստով չարչի էր և միշտ գիւղերը կը շօջէր ու իրեն տուած ապրանքին փոխարէն ցորեն սոտանալով՝ ջորիին վըրայ բեռցած տուն կը վերադառնար։ Օր մը նոյնպէս գիւղէն վերադառնալու ժամանակ, կէս ճանապարհին Զէրքէլ մը առցել կելլէ և կուզէ ջորին բեռով միասին ձեռքէն առնել, բայց բարսեղը չուզեր տալ, Զէրքէլը սպառնալով կուզէ առնել, բարսեղը աւելի արագօրէն հրացանը կուզէ և զայն շանսատակ կընէ։ Զէրքէղի երկու ընկերները պահուած ըլ-

ալով՝ հրացանի ձայնը լսելնուն պէս կսկսին վաղել։ Բարսեղը կը տեսնէ, որ եկողները զինքը պիտի ըսպաննեն, կրկին հրացանը վեր կառնէ և քաջաբար այդ երկուքն ալ կը տատկեցնէ, յետոյ չորս կողմը կը նայի, երբ կը տեսնայ որ մարդ չկայ, ուղղակի տուն կերթայ կը պառկի։ Երկու ժամ վերջը քը-նացած տեղը կը բռնեն և ուղղակի բանտ կը տանին։ Հարցաբնութեան ժամանակ երկան կուգայ, որ տեղին Միւտիրը գիւղերը գնացած ըլլալով վերադարձին, ճայ-բուն վրայ երեք դիակներու կը հանդիպի։ Ճիէն վար իջնալով կը տեսնէ, որ մէկ հատին գեռ չուն-չը կելլէ, կը հարցնէ թէ՝ ձեզ ո՞վ զարկաւ, կը պատսսխանէ՝ բարսեղը և հոգին կը փշէ։ Այս վը-կայութեան վրայ կը դատապարտուի ցմահ բերդար-գելութեան, բայց չորհիւ ուրիշ միջամտութեանց 15 տարուայ վճիռ կարձակուի։

Կարապետը Հաճնի մէջ խաղող ծախած ժամանակ ցած թիւրքին մէկը կուզէ օխա մը գնել, կշուած ատեն թիւրքը կուզէ աւելի առնել, բայց կարապետ չուզեր տալ, որով կուսի կը բոնուին։

Ուհիրը հայոյանըներով սպառնալիքներ կընէ կարապետին։ Կարապետ դաշոյնը քաշածին պէս կը զարնէ թիւրքին, որը անմիջապէս կիյնայ կը սատկի, զօր-քերը վրայ կը հասնին և կը տանին բանտ։ 15 տարուայ վճիռով այն ալ կը քշեն Մերսին։

Այս երկու երիտասարդները բանտին մէջ կը տեսնուին և միասին կսկսին իրենց քաջութիւնը հոն ալ ցոյց տալ։ Ամբողջ թիւրք բանտորկեալներու վրայ սարսափ կը ձգն։ 5 տարի այսպէս կեանք վարելով՝ այսօր կարմիր համբատի դահիճները վերջ դը-րին աննց կեանքին։

Այս սպառնութիւններէն քանի մը օր վերջը շատ խիստ խուզարկութիւններ կատարուեցան և 18 հոգի բանտ քշուեցան, պատճառն ալ եղած էր այն, որ Ալեքսանդրայէն մէկը նամակ մը կը գրէ իր բարեկամ-ներէն մէկին, այդ նամակին մէջ քանի մը բա-րեկամներու ալ բարև գրուած կըլլայ։ Կառավարու-թիւնը այդ նամակը կը բանայ և կը տեսնէ, որ այս ինչ, այն ինչ մարդկանց բարև կայ՝ մէկիկ մէկիկ 18 հոգին ալ կը տանին, կը նետեն բանտ։ Դ.

ՏՐԱՊԻՁՕՆ, Մայիս 22, 1904

Առաջանցի եղբայրներու քաջարի կոիւները տեղ-ւորս թիւրքերն ու կառավարութիւնը խիստ գրգռած է Հայերու գէմ։ Այս օրեր Աստունէն տեղս եկաւ վի-րաւորւած զինւոր մը, որ իր նկարագրութիւններով խիստ կը գրգռէ առանց այն ալ կատաղած ամբոխը։

Մէկ երկու օր առաջ երգուամի ճամբով տեղս Շէյխ մը բերքին 16 ձիաւոր զօրք հետու, ինք պատ-գարակի վրայ նստած էր. յայտնի չեղաւ թէ ո՞վ էր։ Միայն լուր պատեցաւ թէ բաղեշի Շէյխն էր։

Օէնք գտնել շատ դժւար է այժմ և եթէ գտնեին ալ շատ թանգ են: Հայ ժողովուրդը 95 թ. փորձւած՝ այժմ, չ'նայելով որ շատ աղքատ է, ամեն ջանք ի գործ կը դնէ գէթ բէվօլվէր մը, գանակ մը ունենալու:

Խէվի գիւղաքաղաքը, որ քաղաքէս դէպի արևմ. կը գտնի և 4 ժամ հեռաւորութիւն ունի, նոյնպէս յուղման մէջ է. 40—50 տուն հայերը մեծ երկիրի մէջ են: Հաս և թրիպօլիի (Սև Ծոռփէ) մէջ լուր տարածեր են մէկ Յ Հայեր Սասնոյ կողմը ամբողջ թուրք բանակ մը ջարդած են և որու ոխը պատրաստ են տեղոյս հայերէն հանել: Թուրքին մէկը շուկային մէջ դաշոյնը մերկացնելով կը դնէ. ՊԱՍՄԱՆ 8 սենէ տոր գընլընտան չըգմամլչտրն, անձագ վագտը կէլտի Երմէնի պաշը քէսմէյէս (Առիւծ 8 տարի է որ պատեանէն դուրս եկած չէիր, հազիւ ժամանակը եկաւ Հայի գըլուս կտրելու».

Կառավարութիւնը բացարձակ խուլ կը ձեւանայ:

Ծայրը ազդեցիկ հօճային մէկուն որդին զօրք պիտի երթար, վերոյիշեալ տարածայնութիւններու վրա, հօճան ամեն միջոց գործ կը դնէ, որպէս զի իր որդին Հայու գէմ կուերու չի զրկի (ի հարկէ սարսափէն):

Մօտակայ Գօլ աւանի մօտ 10 տուն Հայերն ալ տուները մտած օր աւուր կըսպասն սև օրին:

Տեղոյս բանտին մէջ կան հետեւեալ անձինք.—

1. ՀՃԻ. ՎՐԻՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ. 95-ի կոտորածին աջ ձեռքի 4 մատները կտրտւած և 8—10 տեղից վիրաւորւած լինելով հանդերձ մօտ 15 ամիս բանտը պահեցին և ապա աբսորեցին, սակայն 96 դեկտէմբերի ընդհանուր ատեն աբսորավալը չի գնացած ազատւեցաւ և դարձաւ հալրենիք: Ասկէ 4 տարի առաջ նորէն բանտարկեցաւ իր գրասենեակին մէջ քիչ մը բօթաս գտնելուն համար:

2. ՅԱԿՈԲ ԳԱԶՎԵՃԱՆ. 95 թ. Սեպտ. 26-ին կոտորածին օրը բունւած: Այդ օրը քաջարի կերպով կուած է և փոռաւոր կերպով թուրք խուժանէն պաշտպանւեցաւ: Յանցանքը ինքնապաշտպանութիւնն է:

3. ԱՐՄԵՆԱԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ. 95-ի կոտորածներէն Յ 4 օր առաջ բունւած և ամբաստանւած որպէս Պահրի փաշայի տէորիստը (?!):

4. ՅՈՎՀԱՆՆԻՍ ՔԸՆՑԸՂԴԻԵԱՆ. 95-ի գէպէն վերջը վրայէն թուղթ գտնւած է, 20 տարեկան երիտասարդ մ'է:

5. ԱՐՄԵՆԱԿ ՄԱԿԱՐԵԱՆ. Յեղափոխական է ըսելով առանց վճռի բանտը մնացած է:

Կան և 3 կարնեցի Հայեր, որոնք նոյնպէս 95 թ. գէպէրէն յետոյ բերւած են հոս:

ՊՐԵՏԱՑԻ

ԵԼԻՄ ՀՈՎԵՏ, 28 Ապրիլ, 1904

Ենիրաւ կառավարութիւնը Զարան ալ իր շըրշականերով յետին ծալր թշուառութեան մէջ ձգած է: Զարայի մէջ վաճառականութիւնը, առուտուրը բուրովին թուրքերուն ձնորքն է, վասն զի Հայերը զըրկուած են թուրքերուն ունեցած գիւրութիւններէն, տուետուրի համար գիւղերն ելնել, հայերուն համար վըտանգաւոր բան մ'է, վասնզի մանաւանդ վրան դրամ ունեցող հայ առետրականին կեանքի ապահովութիւն չկայ: Թուրքերը աղէկ գիւտեն կորսնցնել զանոնք, կառավարութիւնն ալ լաւ վարժուած է անպատիժ թողուլ, անպարտ արձակել հայ մորթով, հայուն ինչքը զողցով, հայուն կինը բունաբարով թուրք սրիկաները և այս բացէիբաց: Կառավարութիւնը հայուն աշար ալ չի տար որքան ալ վատահելի ըլլայ նա: Հայուն համար ատանկ բաներ հար ամ են: Հայ երկրագործին հունձքերն ալ միշտ վասուելու դատապարտուած են, թուրքերը կառավարութենէն քաջալերուած անինայ կարածեն, կաւըշըրկեն հայուն խոտն ու ցաները: Տուրքերը վերջին ծայր անխզօրէն կը գանձուին առ հաստրակ, հայը պէտք է ո՛չ միայն արտն ու ինչքը այլ նոյն իսկ օրուան ապրուստը դգալը պէտք է ծախս ու տուրքը (յետնեալ կամ նոր) վճարէ: այս է եղեր նոր եկած է մը ը: Հայերը եթէ առետրական գործ ընեն կամ աշար առնեն, պէտք է որ անպատաւու նուրի է փէնտին, պէտք մը, կատղած մը իրենց ընկեր ընեն, դրամագլուխ տան անոնց, իրենց թաս աստիք գիւնելով հայերը որոնք իրենց ծայր առ ի գով, այսինքն բալոր հողերնին, ինչքերնին գրաւած տալով աշար առած են թուրքը ընկերներով, որոնք գիւղը չափել, արդիւնքը իւրացնել և հայ ընկերնին իւրացնով պարտը միայն վրանին ձըգել սովորութիւն ըրած են ամեն ատեն կառավարութիւնը գիտնալով հանդերձ թէ առնուած գիւղին արդիւնքը թուրքը կերաւ, թաստիգի տէր հայուն օձիքէն կը բոնէ, արտերն ու հողերը կը ծախսէ, շուշան կը լիցնէ ի վաճառ հանելու ասոր ինչքն ու գոյքը, զօրս աժան աժան առնոլը դարձեալ թուրքն է: Ըստծո հաստատելու համար օրինակ մը:

Քանի մը տարիներ առաջ նուրի է փէնտին աշար կառնէ էջոյեան վարդէր յէմմի անուն հայու մը թաստիգովը: Նուրի է փէնտիի անխզգ շահնաներուն հետ շահնայութեան կերթայ նաև Արդիւնքը յէմմին փոխ սագոյ մը կոնակն անցուցած: Գիւղը կը չափեն, կառնեն, ցորեն, գարի կը շտեմարանեն, ձրիէն կուտեն, կը խմեն, կը դառնան տուն: Արդիւնքը քիչ քանակութեամբ ցորեն առած է միայն, մնացածը ամբողջովին նուրի է փէնտիին ձգելով, այն յուրազով որ ան մարդը իր պարտը տուող և իրեն պէտք լսեղձին թաստիգն աղատող մարդ մ'է: Նուրի է փէնտիին կիւրացնէ ամեն ինչ և ժամանակ մը միայն Արդիւնքը կառավարութեան կողմէ թաս գու թիթ (ամսավլճար)

չողութելէն անդին չանցներ Նուրի էֆէնտիի ըրած բարիքը. քիչ ժամանակ վերջ պարտքը կը ձգէ անոր վայ ամբո՞ղջ մին, խուլ մասլով վարդերին թափանձանքներուն: Հարկաւ մեծ տէր ու մը պիռի ըլլար այս խեղձ մարդուն, բոլոր ինչքը ծախուելէն վերջ արտերն ալ պիտի երթար, որով ըսէր: Կառավարութեան չէր ուզէր երթուլ, վասն զի գիտեր որ մահկ ընող բնաւ չպիտի ըլլար իրեն և գուցէ իր այդ կառավարութեան զիմումը սուղի նստէր իրեն, Նուրի էֆէնտիի սրիկայ, տղոցը կողմէն: Խեղձ մարդ զը ձայնը կտրեր և զորը միմայն Նուրի էֆէնտիի եալվարմիշը ըլլալուն ձգեր է. բայց ի զուր ոկատ դովուն աղաչելէն գութ և օգուտ կը լինի՞: Վարդէր օր մը սանկ, օր մը նանկ, օր մալ կինոյ կը մեռնի, կը մեռնի այս, բայց ի խոր խոցուած մէ ոզուակներուս թողելիք ժառանգութեան իրենցը չի պիտի կրնայ ըլլալ, շան կեր ըրի զայն: Կառավարութիւնը ասոնք ամենը գիտնալով մէկանդ անիրաւաբար բանի մը անգամներ թէ Վարդէրէն և թէ զաւակներէն քշուծ բերած է ոչխար, գոմէշ, կով, կահ կարասիք, անկողին ու ծախելով մէկ մասը գանձած է պահանջին, մնացեալ մասն ալ — 100—150 սովի ուղած օրը կը ծախէ արտերը, կառնէ Վարդէրի տըզմէն, երբ ասոնք ա'լ ձանձրանան տար անոր կաշու տալէ, միջամտող գտնելէ ևլն:

Օւրայի մէջ կառավարութեան աչքին առջե թուրը սրիկաներ ամէն Ճնշում կը բանցնեն Հայերու վրայ, երիաւարդ թուրքերու հետ միացած են և օժանդակն ին անոնց կառավարական պաշտօնեաներն ալ: Միւթին ալ հրահանգ տալու ճարպիկ դերը ամէն օր կը խաղայ, միշտ ի վեաս հայուն: Թուրք սրիկաներուն նշանաւորներն են Նուրի էֆէնտիին տղաբը ենիկերն ու Ատիլը. Ենիկը, այսինքն հայու մը աղջիկը թըրքընող կին առնողը, հայու մը հարսն իրենն ընող շունը. իսկ Ատիլը նոր համուղ բոնաւոր մը, նշանաւոր անբարոյական մը որ գերազանցած է ենիկը ալ Կուրին ալ: Եսուելի է նաև կերպուր Ըլիի տղօն գաւսըմը, ժամանակին հայ մը մորթուլ ետակմիի տղան իսկէնտէրը, Միւթիին քեամիլ էֆէնտիին (պաշտօնեայ հեռագրատան) ևլու ևլն: Ասոնք ուշին իրենց անհամար արբանիակները, որոնք կապըն հայերէն յափշտակութեամբ, գոզութեամբ յայտնի համարձակ Այն հայը, օր սուտ իրաւ ֆէտայի ձանցուած է, շուկային մէջտեղ պառկեցնելով կը ծեծեն, խերը կանին այն հայուն, օր իբր մարդ իրաւունք պաշտամէ կը փորձէ: Վաշխառուներ ուզածնին կընեն Հայերուն: Հայ կիներու պատիւն ընդհանրապէս բացէն խաղալիկ դարձած է ձեռքինին:

Վերջին թուրքերը հոս տարաձայնութիւններ հանել սկսած են թէ ոհայերը ինչպէս օր վան, Մաւշ ապստամբած են հոս ալ պիտի ապստամբին. մարդ տարին, մարդ բերին, ֆէտայիներն եկան, տու-

ները լեցուեցան, զէնքեր բաժնուեցան Հայերին ելնա, ուստի պէտք է ջարդել կեավուրները կըսեն: Վարդապետին պատարագին ներկայ գտնուելու Համար երբ Հայերը անցեալ օր վանք գացին, թուրք սրիկաներու պարագլուները այսպէս լուր հանեցին թէ ոհայերը որոշում տալու գնացին օր վրանիս յարձակին: Այսպիսի յերիբանըներով նպատակին խուժան ընել է: Գիտեն թէ որ հայերը բան մը չունին և բան մը ընելու կարող չեն, սակայն դիտմամբ թալանի յուսվով կընեն, կը զրգուն: Դրութիւնը շատ գէշ և վտանգաւոր գարձած է Զարա և շրջակայ գիւղերուն: Կառավարութեան ամենածանը տուրքերուն, թուրք տարրին ամենօրեայ կեղեքամերուն, կառավարութեան մէժուտովը հայերուն կրած անտիսական սոսկալի տագուաններուն հետ տիրել սկսած է ամէն օր վախ, ամէն օր սարսափ զարնուելու, սպանուելու, թալնուելու: Այսոնց վրայ երբ աւելցնէ այցելողը մեր հայերուն բարոյական խիստ անկայուն վիճուկը, երեւան կուգայ ճշգրտօրէն Զարայի և շրջակայ հայ գիւղերուն մեր ժողովրդին կատարելսպէս անտանելի վիճակը:

Այսու ամէնուն զարմանը կրնան ըլլալ միմիայն յեղափոխական գոհացուցիչ ոյժեր, զօրաւոր կազմակերպութիւն ամէն տեղ, մանաւանդ աւսպիսի նիւթական ու բարոյական սոսկալի աղքատութիւն տիրած տեղերը:

ԱՐՏԱԿ

Շ. ԳԱՐԱՀԻՍԱԲ, Մայիս 10, 1904

Հայրենիքի վիճակի. — Մեր մոռհասէպէճին ու միւրեսարքի Յոյն մուավինը. — Մեր դպրոցը. — Մեր կարիսապետը. — Քանի մը հայ վատեր. — Ընկերի մը ժանամար կորուստը:

ԱՌ ապուշը ըլլալու է մարդ, օր այսափ տխուր ու գինդակ փորձերու գժբախտ ենթարկութենէն վերջ տակաւին լաւատիս մնացած ըլլայ ու պնդել փորձէ թէ թուրք կառավարութիւնը հայտջինջ ծրագիր մը որ կը մնուցանէ տարիներէ ի վեր և իր բուն նրա պատակը, ներկայ խղճալի բէժիմականութիւններով, երկրին անկումը և մասնաւորաբար հայ ժողովուրդին փառցումը չէ: Ազգակործան այս նպատակին իրազորդմին ձգտող թուրքական բէժիմի գործադրութիւնքն ծագում առած գէպերու, խժդժութիւններու, հարստահարութիւններու և արիւնխման գաղանութիւններ բու բազմաթիւ շարք մը. — որոնց էն գլուխը կը մայ իբրև գժոխային ոճիր և յաւիտենական դատակնիք մեծ մարդասպան Համբար ճակտին՝ 95-ի աշկատաւոր թուականին սարաւատ արհաւերքը. — Երեւան հանիցին բացարձակապէս, թէ թուրք կառավարութիւնը որոշած է այլ ևս ջնջել հայութիւնը այս ու

այն միջօցներով, ի հարկին կոտորածով, ի հարկին կողապուտով, ի հարկին բանտարկութիւնով և իր կարգին: Ու վատղուէր, կործանող ընթացքը՝ խօսուն փաստերով կը հաստատէ արդէն: Տեսնուեցաւ ամեն ատեն որ, հռն՝ ուր խեղճ ժողովուրդը սրախաղխոզ ջարդել պէտք էր՝ Եըլտըզի ոճրագործն, իր վայրագ կառավարական կազմակերպութիւնն ու խաժամուժ տաճիկ բարբարոս ամբոխը չը վարանեցան վաղցնելու անմեղ հայերու անըիծ արիւներն, իրենց ոճրագործ, աղտոտ ձեռքերն անոնց կարմրով զոհարիւնին մէջ լուալու դիւային քմահաճոյքը գոհացնելու: Հռն՝ ուր թալինել պէտք էր, առանց ամշնալու հարստահարութիւններու տիրացան քանի մը ժամերու մէջ՝ հայերու կոնակին լաթերն անգամ հանել տալով առնելու ստորեագոյն ցածութիւնով: Երբ բանտարկութիւն հարկաւոր էր, մեղաւորն ու անմեղը, բուն յեղափոխական-յանցաւորն ու ոչ-յեղափոխականը չը փընտըռուեցան երբէք, ու հարիւրաւորներով չարչարուեցան բանտերու մթին նկուղներուն մէջ, ուր արիւնուշտ սուլթանի անարդար արդարութիւնը կը թիացնէ ատալէթ անունին տակ: Դաժան բռնուկալը իւր վշուա գահին վրայ բազմած, օրէ օր ցնորային, խշահար երազներու ազգեցութիւններով, միշտ կատղեցաւ, միշտ ջարդեց, միշտ բանտարկեց, միշտ հաստահարեց, միշտ կողոպտեց ու միշտ ըրաւ ու լրաւ:

Այս օր ալ նոյն է երկին վիճակը ինչ որ երապաջ: Իրերը փոխուած չեն բնաւ, ու ժողովուրդը միշտ նոյն խժգութիւններու ենթակայ ժողովուրդն է նորէն, սա՛ տարբերութիւնով միայն որ օրէ օր, անցած ժամանակին հետ մէկտեղ, ժողովուրդը նիւթապէս ու բարոյապէս փացնելու մեթուներն ալ կը փոխուին հետզիետէ և կը կատարելագործուին՝ թուրքական լիբր կառավարութեան ու վայրենի ժողովուրդին կողմէ, շնորհով ա՛յն քաջալերութեան՝ որը վայելեցին՝ երբ իրենց քով մնաց անհամարատու ամեն զեղծում, ամեն անարդարութիւն և ամեն անդթութիւն: Այս կործանարար դրութիւնը շեշտուցաւ մանաւանդայն այն տեղերուն մէջ, որոնք ներքին գաւառ անունով կը ճանցուին թուրքիայի մէջ, այսինքն ծովէն հեռու եղած տեղերը մանաւանդ: Օրը նոր, փորձանքը, զըրկանքն ու ժողովուրդը հարստացարելու, կողոպտելու միջոցը նոր է մեր տեղերուն համար թուրք պաշեպօգուգը անարդարնը պատրաստ ունի իր բերնին ու սըրտին մէջ՝ երբ ինդիրը կամ գործը կեավուրի մը վերայ է: Եւ որովհետեւ կայս. թուրք ժողովուրդին պաշապանն ալ աւազակ կառավարութիւնն է, ուրեմն բան մը ըսպասուիր այս կործանող տարրէն, — որ արդարութեան, հանրային ապականութեան անունով կաղմակերպուած գողերու ներդաշնակ ընկերութիւն մէէ, որուն կը նախագահէ սրիկաներու սրիկայ, գողերու գոյ՝ Ապտիւլ Համիտը:

Թշուառութիւնը և ժողովուրդին աղքատութիւնը ապահովութիւնը չէ:

միւն չե կայ բնաւ որպէս զի քիչէ շատէ գործ լլ-
լայ: Ասոր վրայ աւելցուը կառավարութեան զանա-
գան Ճնշումներու հետաքրքրական հաւաքածոն, տուր-
քերու տարապայման ծանրութիւնը ու դրամ գան-
ձելու ամենախիստ միջոցները՝ որոնց ենթակայ է ե-
ղած հէք հայ ժողովուրդը: Աղքատութիւն, անօթու-
թիւն ու մերկութիւն այլ ևս լոկ բառեր չեն հա-
յուն համար, այլ ցուրտ իրականութիւններ, որոնք
կը Ճնշեն զինքը բռնակալութեան ծանրածանը լուծին
ուակ:

Համբերութիւնն, ալ մինչև ե՞րբ հապերել:
Երբ այս տողերը կը կարդաք՝ մտածեցէք արդեն
թէ թ ա հ ս ե լ տ ա ր ն ե ր գիւղերուն մէջ ին-
չե՞ր չեն ըներ, թուրբ պաշտօնեաներ ինչ խուժդուժ
անդթութիւններ կը գործեն: Կալուածներ, ստաց-
ուածքներ, տուներ ու... պատիւներ բռնի կը ծախ-
ուին, առանց աճուրդի: 30-40 արժող արտեր, պար-
ագներ կամ ուրիշ կալուածքներ 1-200 դուրսուշով
կը ծախուին և կառավարական տուրքերու կը հաշ-
ուուին: Խեղճ ժողովուրդը որի՞ բողոքէ, ով պիտի
լսէ: 20 զբշ. պարտքի համար տունդ, պարտէզդ
կամ արտդ կը ծախէ: Արդէն լուծքդ քշած տա-
րած է, տունդ կողըպտած բոլորովին քանի մը ան-
գամ: Ո՛վ գիտէ 95-ի պաշտօնական թալանէն վերջ
